

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՋԱՐՈՒՅԻ ՈԱՖԻԿԻ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ԳԵՐՀԱՍԿԱՑՈՒՅԹԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Յ. Ֆլջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Ն.Լ. Հարությունյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Տ. Կնյազյան

Առաջատար կազմակերպություն

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ.մայիսի 27-ին, ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՅ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. ապրիլի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի ունեցող գլոբալացման պատճառով ազգերի և ժողովուրդների լեզվամշակութային հարստության ուսումնասիրության կարևորությունը շարունակում է մնալ արդիական՝ գրավելով գիտության տարբեր ոլորտների հետազոտողների ուշադրությունը: Ժամանակակից լեզվաբանության մեջ արդիական է լեզվական փաստերի ուսումնասիրությունը լեզվի մարդակենտրոնության դիտարկումից: Լեզուն, որի հիմնական գործառնությունից մեկը հաղորդակցության ապահովումն է, տեղեկատվության կողմավորումը և ապակողմավորումը, ուսումնասիրվում է որպես մի երևույթ, որն ուղղված է դեպի մարդ արարածը: Սա, բնականաբար, իր արտացոլումն է գտնում արտաքին և ներքին աշխարհների իրողությունների տարակարգման և անվանարկման գործընթացներում:

Արդի փուլում սույն թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է երկու հանգամանքով: Նախ՝ կարևորվում են միջմշակութային հաղորդակցության մեխանիզմների և միջոցների զարգացումը և կիրառումը, քանի որ համացանցային միջավայրն ընդլայնել է շփման սահմանները, ապա՝ «ընտանիք» հասկացության վերափոխումն է, սոցիումի զարգացմամբ պայմանավորված, ոչ պակաս կարևոր հանգամանք է: Այս համատեքստում լեզու-մտածելակերպ-մշակույթ-հասարակություն հարացույցը դառնում է այն առանցքը, որի վերլուծությունը լեզվաբանության համար բազմաթիվ ուսումնասիրությունների աղբյուր է:

Յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ ունի աշխարհի իր լեզվական պատկերը, որը պայմանավորված է մի շարք լեզվական և արտալեզվական գործոններով: Լեզուն արտացոլում է աշխարհը, տվյալ լեզվով խոսող ժողովրդի մշակույթը և հոգեկան կերտվածքը: Անհերքելի է լեզվի դերը ազգային բնավորության, հոգեբանության, ինչպես նաև լեզվամտածողության ձևավորման գործընթացում: Իսկ լեզվի կարևորագույն գործառնությունից մեկը մշակույթը պահպանելն է և հաջորդ սերունդներին փոխանցելը: Փոխանցման գործառնություն իրականացնելիս լեզուն շատ հաճախ կիրառում է ժողովրդական դարավոր իմաստությամբ հարստացած դարձվածային միավորներ:

Ատենախոսությունը նվիրված է «ընտանիք» գերհասկացության լեզվամշակութային և լեզվաճանաչողական ուսումնասիրությանը (անգլերենի, իսպաներենի և հայերենի լեզվական նյութի հիման վրա): Ցանկացած ազգի մտածելակերպին բնորոշ են մի շարք «բնածին» հասկացություններ, որոնք զարգանում են լեզվից անկախ: Հասկացության հիմքում միշտ ընկած է որևէ արժեք, քանի որ հասկացույթը ծառայում է մշակույթի ուսումնասիրությանը, իսկ մշակույթի հիմքում ընկած են արժեքային սկզբունքներ¹: Աշխարհընկալումը, մշակույթը, կենսակերպը, սովորույթները բնորոշվում են տարբերակիչ հատկանիշներով՝ երևան հանելով հասկացությունների բովանդակային տարբերությունները: Այնուամենայնիվ, գոյություն ունեն այնպիսի հասկացություններ, որոնք ցանկացած լեզվամշակույթի անքակտելի մասն են կազմում («աշխարհ», «ժամանակ», «ազատություն», «ճշմարտություն», «ճակատագիր», «սեր», «խիղճ» և այլն): Այսպիսի հասկացությունների թվին է պատկանում նաև «ընտանիքը», որը, լինելով համամարդկային

¹ Карасик, В. И. Культурные доминанты в языке. Языковая личность: культурные концепты. Волгоград, 1996, с. 3-15.

«համընդհանրույթ», օժտված է ազգային յուրահատկություններով: Հանդես գալով որպես հասարակության բջիջ՝ այն իրականում հայելի է, որտեղ արտացոլվում են ազգերի հասարակական, իրավական, ժողովրդագրական, մշակութային կյանքի կողմերը: Տարատեսակ հասարակական շերտերի պատկանող ընտանիքներ իրենց հանրագումարով կազմավորում են հասարակությունը և արտացոլում հասարակական հարաբերությունների կառուցվածքի ողջ բարդությունը²: Ընտանեկան վարքագծի սերնդեսերունդ փոխանցվող նորմերը և արժեքները վերածվում են սովորույթների, որոնք կողմնորոշում են մարդկանց կենսակերպը և մտածելակերպը տվյալ ազգին յուրահատուկ մեկ ընդհանուր ուղղությամբ:

Հարկ է նշել, որ սույն աշխատության մեջ «ընտանիք» մեր կողմից դիտարկվում է որպես գերհասկացույթ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն մեր աշխատության մեջ ներկայացված է երեք իմաստային դաշտերի տեսքով, որոնք իրենց մեջ ներառում են մեծ քանակությամբ այլ հասկացույթներ: Այս առումով լիովին համամիտ ենք Ե. Կոստուրբինայի հետ առ այն, որ գոյություն ունեն հասկացույթներ, որոնք այնքան սերտ են կապված միմյանց հետ, որ իրենց արտահայտած հասկացությունները կարող են տրամախաչվել՝ լրացնելով միմյանց³: Վերոգրյալից զատ ուշադրության է արժանի Ս.Գ. Վորկաչևի տեսակետն առ այն, որ «Լեզվամշակութաբանության մեջ անհրաժեշտություն կա մշակելու մի եզրույթ, որն առավել մասշտաբային կլինի, քան հասկացույթը, և որը հնարավորություն կընձեռի ուսումնասիրության ոլորտ ներգրավել իմաստային ամբողջական խմբեր, որոնք իրենց հերթին բաղկացած են հասկացույթներից՝ «սուպերհասկացույթներ», «գերհասկացույթներ»⁴: Շփոթությունից խուսափելու համար, հարկ ենք համարում նշել, որ «գերհասկացույթ» եզրույթը ռուսերեն «гиперконцепт» եզրույթի հայերեն թարգմանությունն է:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է նաև նրանով, որ արդի փուլում արժևորվում են միջգիտակարգային ուսումնասիրությունները, իսկ լեզու-հասարակագիտություն-փիլիսոփայություն-միջմշակութային հաղորդակցություն ոլորտների կապի դերը էական է «ընտանիք» հասկացույթի ուսումնասիրության համար: Վերջինս համընդհանրույթ է, որն առկա է այլ գիտություններում և գիտական ոլորտներում: Այդ գիտությունները մեր ուսումնասիրության համար ստեղծում են գիտական միասնական միջավայր, որն ընդլայնում է «ընտանիք» հասկացույթի իմաստը և նրա գործնական կիրառության շրջանակները:

Արդի փուլում «հասկացույթ» հասկացությունը բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է և տարբեր կերպ է մեկնաբանվում: Այն հաճախ մեկնաբանվում է որպես իրականության վերաբերյալ մարդու իդեալական պատկերացում՝ պայմանավորված մշակույթով (А. Вежбицкая), որպես տրամաբանական տարակարգ (Ю. Степанов), որպես գործնական փիլիսոփայության հասկացություն (Н. Арутюнова), որպես բազմաշերտ գոյացություն (В. Карасик) և այլն:

² Любарт М. К. Семья во французском обществе: XVIII-начало XX вв. М.: Наука, 2005, с. 9.

³ www.efp.psu.ru

⁴ Крячко В. Б. Концептосфера "война" в английской и русской лингвокультурах: автореф. дис. канд. филол. наук: 10.02.20, Волгоград, 2007, с. 2-3.

Հետազոտության առարկան «ընտանիք» գերհասկացույթն է, անգլերենում՝ իսպանական և հայկական լեզվամշակույթներում դրա արտահայտման ձևերի համեմատությամբ:

Ուսումնասիրության **արդիականությունն** այն է, որ ժամանակակից աշխարհում տարբեր ազգերի ներկայացուցիչների շփումը չի սահմանափակվում միայն լեզուների իմացությամբ, անհրաժեշտ է նաև ազգային բնավորության, աշխարհընկալման և աշխարհայացքի իմացություն, որն էլ կապահովի միջմշակութային արդյունավետ հաղորդակցություն: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև իսպաներենում «ընտանիք» հասկացույթին նվիրված աշխատությունների ի սպառ բացակայությամբ, իսկ անգլերենում և հայերենում նշված հասկացույթի համակողմանի ուսումնասիրությունների ոչ բավարար քանակով, անգլերենում և զուգադրվող երկու լեզուներում ընտանիք հասկացույթի բառային և դարձվածային միավորների վերոգրյալ երեք իմաստային դաշտերի միջուկի և շրջագծերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների բացակայությամբ:

Այս ամենից բացի՝ անգլերենը և իսպաներենը վերլուծական, իսկ հայերենը համադրական լեզուներ են, որով էլ պայմանավորված են վերջիններիս կառուցվածքային տարբերությունները, մասնավորապես դրանց բառիմաստային կառուցվածքները: Մի քանի լեզուների նյութի հիման վրա իրականացված ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում վերհանել «ընտանիք» հասկացույթի գործառութային առավել ընդհանրական գծերն անգլերենում, իսկ զուգադրական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս լեզվամշակութաբանության դիրքերից վեր հանել լեզվակիրների աշխարհընկալման և աշխարհազգացողության յուրահատկությունները: «Ընտանիք» հասկացույթը զուգադրվող լեզուների կենտրոնական հասկացույթներից է, ուստի դրա՝ որպես մարդու կյանքի կենսական, հոգևոր, հուզական, մտավոր և հասարակական տարրի ուսումնասիրությունը թույլ է տալիս երևան հանել տվյալ լեզվամշակութային հասկացության մարդակենտրոն բնույթը: Այլ կերպ, սույն ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է միջմշակութային հաղորդակցության արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

Աշխատանքի **նպատակն** է առավել լիարժեք և համակարգված վեր հանել «ընտանիք» հասկացույթի իմաստային յուրահատկությունները բառային մակարդակում, ինչպես նաև բացահայտել տվյալ լեզվական երևույթի համատեքստային առանձնահատկությունները անգլիական լեզվամշակութաբանության մեջ՝ զուգադրելով դրանք իսպաներեն և հայերեն համարժեքների հետ:

Ըստ առաջադրված նպատակների՝ աշխատանքում լուծվում են ստորև ներկայացված խնդիրները.

1. Ժազումնաբանական ծառի միջոցով ճշգրտել ընտանիք հասկացույթը ներկայացնող բառային միավորների տեղակայությունը կենտրոնական միավորի՝ «երեխա» հասկացույթի նկատմամբ:

2. Ճշգրտել ընտանիք հասկացույթի երեք իմաստային դաշտերն արտացոլող դարձվածային միավորների միջուկի և շրջագծի սահմանները:

3. Հետազոտել «ընտանիք» հասկացույթի իմաստային տրոհումներն անգլերենի և զուգադրվող լեզուների բառային մակարդակում (բառեր և ասացվածքներ):

4. Իրականացնել «ընտանիք» գերհասկացույթի քննություն տեքստային մակարդակում անգլերենում և զուգադրվող լեզուներում:

Լեզվամշակութային յուրահատկությունների վերլուծության համար, որպես ծագումնաբանական ծառի մեկնարկային կետ է ընտրվել «երեխա» հասկացությունը, քանի որ երեք լեզուներում էլ «ընտանիք» հասկացույթի բառարանային նշանակության մեջ կարևորվում է երեխայի գոյությունը, այսինքն «երեխան», ծնողներից բացի, տվյալ հասկացույթի կենտրոնական և հիմնական հասկացություններից մեկն է: Քննել ենք նաև «ամուսնական հարաբերություններ» իմաստային դաշտ հասկացությունը, քանի որ այն կարևոր դեր է կատարում «ընտանիք» հասկացույթի ուսումնասիրության և պարզաբանման գործում:

Առաջադրված նպատակների իրագործման համար կիրառվել են հետևյալ **մեթոդները**.

- հասկացութային վերլուծության մեթոդը,
- բաղադրիչային վերլուծության մեթոդը,
- զուգադրական մեթոդը,
- համատարած ընտրանքի մեթոդը,
- վիճակագրական մեթոդը:

Ատենախոսության **նորույթը** պայմանավորված է նրանով, որ աշխատանքում կատարվում է անգլիացիների, հայերի և իսպանացիների գիտակցության մեջ «ընտանիք» հասկացույթի համընդհանուր և ազգային յուրահատուկ բնութագրիչների համեմատություն, որը հնարավորություն է տվել վեր հանել տվյալ հասկացույթի լեզվամշակութային առանձնահատկությունները համաժամանակյա հարացույցում և հետազոտել տվյալ հասկացույթի իմաստային ընդգրկվածությունը:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքը** ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության ոլորտում առաջատար հետազոտողների ուսումնասիրություններն են.

• **լեզվամշակութաբանության և միջմշակութային հաղորդակցման ոլորտում`** Դ. Յ. Դոբրովոլսկիյ, Ա. Ս. Կարմին, Վ. Ա. Մասլովա, Ջ. Դ. Ժոպովա, Ի. Ա. Ստեպանին և այլք,

• **հասկացույթի խնդիրների շուրջ`** Ս. Գ. Վորկաչով, Ա. Ա. Ջալևսկայա, Վ. Ի. Կարասիկ, Գ. Գ. Սլիշկին, Յու. Ս. Ստեպանով, Ն. Դ. Արությունովա, Մ. Վ. Պիմենովա, Վ. Ն. Թելիա և այլք:

Աշխատանքի բառային նյութը վերցված է Ա. Վ. Կունինի, Ս. Ս. Սեֆերյանի, Լ. Վ. Հովհաննիսյանի, Ա. Ա. Լազարյանի, Ն. Բարաթյանի, Ա. Ս. Սուբխասյանի, Ս. Ա. Գալստյանի, Ա. Ղանալանյանի, Խ. Գ. Բաղիկյանի, Լուիս Խունսեդայի, Սանչես Լադերոյի, Ռոդրիգես Մարինի, Սանտա Կրուսի, Ջենիֆեր Սպիկի, Ջոնաթան Լոյի - բառարաններից:

Ատենախոսության **տեսական նշանակությունը** այն է, որ աշխատանքում առաջադրվում են մի շարք տեսական դրույթներ: Անգլերենում և զուգադրվող լեզուներում «ընտանիք» հասկացույթի ուսումնասիրությունը բառային և

դարձվածային մակարդակներում կարող է տեսական հարցադրումների նյութ ծառայել ընդհանուր լեզվաբանության, ոճաբանության, տիպաբանության, տեքստաբանության, ինչպես նաև դարձվածաբանության և թարգմանության տեսության համար:

Ատենախոսությունն ունի նաև **գործնական արժեք**: Աշխատանքում առաջադրված հիմնադրույթները և օգտագործված լեզվական նյութը կարող են կիրառվել որպես տեսագործնական նյութ զուգադրական ոճաբանության, դարձվածաբանության, լեզվամշակութաբանության, միջմշակութային հաղորդակցության, թարգմանության տեսության, ինչպես նաև անգլերենի և իսպաներենի դասընթացների շրջանակներում: Հետազոտության ստացված արդյունքները կարող են հիմք դառնալ եռալեզու (անգլերեն-հայերեն-իսպաներեն) բառարանի կազմման համար:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված խնդիրներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության նպատակը, վերլուծության մեթոդները, գիտական լեզվաբանական հիմնական հասկացությունները, ուսումնասիրվող նյութի վերաբերյալ ժամանակակից լեզվաբանության մեջ առկա տեսակետներն ընդհանրական գծերով, ինչպես նաև հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, մեթոդները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը, տեսական և գործնական արժեքները:


Առաջին գլխում /«Հասկացութաոլորտի ազգային ինքնատիպությունը»/, անդրադարձ է կատարվում հասկացութաոլորտին և դրա ազգային ինքնատիպությանը՝ շեշտադրելով այն գաղափարը, որ այս կամ այն լեզվակրի աշխարհընկալումը միշտ համակցվում է հասկացութաոլորտին: Ուսումնասիրվում են նաև «աշխարհի պատկեր» և «աշխարհի լեզվական պատկեր» հասկացությունները, փորձ է արվում վեր հանել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Այս գլխում նպատակահարմար ենք գտել նաև հպանցիկ անդրադարձ կատարել «նշանակություն», «հասկացություն» և «հասկացությ» եզրերի տարանջատմանը՝ հետագա շփոթից խուսափելու համար: Այստեղ խոսվում է նաև «հասկացությ» եզրի մասին՝ նշվում են վերջինիս դիրքը միջգիտակարգային հարացույցում, ինչպես նաև դրա վերաբերյալ ժամանակակից պատկերացումները:

Երկրորդ գլխում /«Ընտանիք» գերհասկացությը լեզվամշակութային համատեքստում/ ներկայացվում է «ընտանիք» հասկացության պատմական զարգացումը և կայացումը՝ սկսած անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Այս գլխում ներկայացվում է մեր կողմից առաջ քաշված այն կանխենթադրույթը, որ մարդկությունը, տասնյակ հազարավոր տարիների ընթացքում անցում կատարելով *հանրամուսնությունից* դեպի *մոնոգամ* ընտանիք, ժամանակակից փուլում ևս «ընտանիքի» մի նոր մոդելի ստեղծման մախաշեմին է կանգնած կամ արդեն իսկ թևակոխել է այդ փուլը: Ուսումնասիրությունների և հարցումների համաձայն՝ Մեծ Բրիտանիայում և Իսպանիայում սա արդեն իրողություն է, որը չի կարելի ասել Հայաստանի մասին:

Երրորդ գլխում /«Ընտանիք լեզվամշակութային գերհասկացությի դրսևորումների առանձնահատկությունները անգլերենում, հայերենում և

իսպաներենում»/ ուսումնասիրվել է «ընտանիք» գերհասկացույթը լեզվում՝ բառամթերքի հիման վրա: Սույն աշխատության մեջ «ընտանիքը» մեր կողմից դիտարկվում է որպես գերհասկացույթ: Այս առումով լիովին համամիտ ենք Ս.Գ. Վորկաչևի հետ առ այն, որ «Լեզվամշակութաբանության մեջ անհրաժեշտություն կա մշակել մի եզրույթ, որն առավել մասշտաբային կլինի, քան հասկացույթը, և որը հնարավորություն կընձեռի ուսումնասիրության ոլորտ ներգրավել իմաստային ամբողջական խմբեր, որոնք իրենց հերթին բաղկացած են հասկացույթներից՝ «սուպերհասկացույթներ», «գերհասկացույթներ»» (rosgreat.org/?p=1342, Н. Арутюнян 2007:11-13, В. Крячко 1995:2-3):

Կարծում ենք, որ «ընտանիք» հասկացույթը կարելի է նմանօրինակ գերհասկացույթների խմբին դասել: Սույնը հիմնավորելու համար «ընտանիք» հասկացույթի ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների հիման վրա կազմել ենք վերոգրյալ հասկացույթի գծապատկերը, որտեղ «ընտանիք» գերհասկացույթի մանուշակագույնով նշված տիրույթում ներառել ենք երեք իմաստային դաշտերը՝ «բարեկամական», «ամուսնական», «ծնող-երեխա», իսկ վերոգրյալ իմաստային դաշտերում զետեղել ենք դրանք ներկայացնող բառային միավորները, որոնք, առանձին վերցված, նույնպես կարող են հասկացույթներ համարվել: Գծապատկերից ակնհայտ է, որ «ընտանիք» գերհասկացույթը ներառում է մեծ քանակությամբ հասկացույթներ, ուստի ամբողջովին արդարացված է վերջինս գերհասկացույթ համարելու մեր ընտրությունը (Գծապատկերը 2. Սողոմոնյանի):



Այս զլխում անդրադարձ ենք կատարել «ընտանիք» գերհասկացույթի իմաստային երեք դաշտերի՝ բարեկամական, ամուսնական և ծնող-երեխա հարաբերությունների ուսումնասիրությանը, վեր ենք հանել այն բառային միավորները, որոնցով կազմվում են այս երեք իմաստային դաշտերը: Քանի որ «ընտանիք» գերհասկացույթի իմաստային դաշտերը կայուն չեն, և մեկ բառային միավորը կարող է միաժամանակ մի քանի իմաստային դաշտերում կիրառվել, փորձ է արվել նաև ներկայացնելու նշված իմաստային դաշտերն ընդգրկող գոյականները ծառի տեսքով երեխայի դիտանկյունից: Ծառի համար մեկնարկային կետի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նշված լեզուներում «ընտանիք» բառի բառարանային առաջին նշանակությունը ներառում է «ծնողներին և երեխաներին», բացի այդ՝ երեք լեզուներում էլ առկա է «ընտանիք» բառի՝ «երեխաները ծնողների համար» նշանակությունը, սակայն արձանագրված չէ այնպիսի իմաստ, ըստ որի՝ միայն ամուսիններն ընտանիք համարվեն: Մեկնարկային կետի ընտրության համար հիմք է հանդիսացել նաև այն, որ ընտանիքի անդամներ ցույց տվող բառերի մեծամասնությունը ներկայացված է հենց երեխաների դիտանկյունից՝ սորաքույր, հորեղբայր, սորաքեռայր, եղբորորդի և այլն:

Հատկանշական է, որ հայերենում, ի տարբերություն անգլերենի և իսպաներենի, «ընտանիք» բառի բառարանային իմաստների մեջ նշվում է *կնոջ, ամուսնու* և երեխաների մասին, որով շեշտադրվում է ծնողների՝ պաշտոնապես պսակադրված լինելու փաստը: Ակնհայտ է, որ անգամ բառերի բառարանային նշանակություններից կարող ենք եզրահանգումներ անել հայ լեզվամշակույթի ավանդապաշտության չափի և ծիսակատարությունների կարևոր դերի մասին: Ուստի անգլերենում և իսպաներենում ամուսնական հարաբերություններ արտահայտող իմաստային դաշտը ներառված չէ ծառի մեջ, մինչդեռ հայերենում այն ծագումնաբանական ծառի մասն է:

Զուգադրվող երեք լեզուներում պատկերված ծառը մեզ հնարավորություն է ընձեռում պատկերացնելու, թե ինչպիսի ճյուղավորում կա յուրաքանչյուր լեզվում, բառային որ միավորներն են ներառվում, որոնք՝ ոչ և ինչու, բացի այդ՝ դուրս բերելու միջուկի նկատմամբ տարբեր աստիճանի միջնորդավորված կապեր ունեցող բառային միավորները:

Միևնույն ժամանակ զուգադրվող երեք լեզուներում ծագումնաբանական ծառի վերլուծության արդյունքում ներկայացվել է «ընտանիք» գերհասկացույթի միջուկը և շրջագիծը:


«Child» հասկացույթի հետ առաջին աստիճանի միջնորդավորվածությամբ կապված են «sister-in-law, brother-in-law», «nephew, niece», «aunt» և «uncle», «grandparents, grandmother, grandfather» բառային միավորները (sister-in-law = brother's ¹ → wife): Առաջին չորս բառային միավորների կապն իրականացվում է «brother, sister», հաջորդ հինգինը «mother, father, parents» հասկացությունների միջոցով:

Երկրորդ աստիճանի միջնորդավորված կապով են կապված «aunt, uncle, grand-aunt, grand-uncle, cousin, cousin-sister, cousin-brother, great-grandparents, great-grandmother, great-grandfather» հասկացությունները (aunt=parents' ¹ → brother's ² → wife):


Երրորդ աստիճանի միջնորդավորված կապով են կապված «great-great-grandparents, great-great-grandmother, great-great-grandfather, second cousin» բառային

միավորները (great-great-grandfather = parents' father) $\xrightarrow{1^\circ}$ parents' $\xrightarrow{2^\circ}$ parents' $\xrightarrow{3^\circ}$


Աղյուսակ 1 «Ընտանիք» գերհասկացույթի գծագրային պատկերն անգլերենում



Աղյուսակ 2 «Ընտանիք» գերհասկացույթի գծագրային պատկերը հայերենում



Աղյուսակ 3 «Ընտանիք» գերհասկացույթի գծագրային պատկերը իսպաներենում



Ջուզադրվող երեք լեզուներում «ընտանիք» գերհասկացույթի միջուկի և շրջագծերի գծագրային պատկերն ուսումնասիրելով՝ կարող ենք մեզ, որ

1. անգլերենում «ընտանիք» գերհասկացույթի միջուկը առավել նմանություններ է համընթաց բերում իսպաներենի հետ:
2. Անգլերենին, ի տարբերություն հայերենի, հատուկ է երրորդ աստիճանի միջնորդավորվածությամբ կապակցումը, որտեղ այն նմանություն ունի իսպաներենի հետ:

3. Անգլերենում «ընտանիք» հասկացության միջուկը արտահայտված է 15 բառային միավորներով և առավել նմանություններ է հանդես բերում իսպաներենի հետ: Միակ տարբերությունն այն է, որ անգլերենում առկա է «stepparents» բառային միավորը, որը բացակայում է իսպաներենում:

Հաշվի առնելով, որ միայն գոյականների ուսումնասիրությամբ հնարավոր չէ բացահայտել այս կան այն գերհասկացության կառուցվածքն ու բովանդակությունը, սույն զխում փորձել ենք առանձնացնել վերոհիշյալ երեք իմաստային դաշտերը ներկայացնող տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը՝ նշելով նաև դրանց ընդհանուր քանակը: Արդյունքում պարզ դարձավ, որ «ընտանիք» գերհասկացություն ամենավառ կերպով արտահայտված է «հարազատական հարաբերություններ» իմաստային դաշտում (անգլերենում՝ 91, հայերենում՝ 140 և իսպաներենում 78 բառային միավորներ):

Նկատվում է մշակութային⁵ (կուլտուրենմաների) առկայություն անգլերենում, որոնք քիչ քանակությամբ բնորոշ են նաև իսպաներենին:

Այստեղ ուսումնասիրվել է նաև «ընտանիք» հասկացության իրացումը դարձվածաբանության մեջ: Ուսումնասիրության առարկա են դարձել ասացվածքները, որոնք յուրաքանչյուր ժողովրդի հայելին են և արտացոլում են տվյալ ժողովրդի սովորությունները, վարքուբարքը, կենցաղը, հարաբերությունները և այլն, այսինքն՝ լեզվամշակույթը: «Ընտանիք» գերհասկացություն արտահայտող ասացվածքները ամենաշատն իսպաներենում են (613 ասացվածք), այնուհետև՝ անգլերենում (231 ասացվածք), ապա՝ հայերենում (165 ասացվածք): Ուսումնասիրության ընթացքում դուրս են բերվել մի շարք հետաքրքրական դեպքեր, մասնավորապես՝

ա. Իսպաներենի գրեթե բոլոր ասացվածքների արտահայտած իմաստները կան նաև հայերենում, բայց արտահայտված չեն դարձվածաբանական միավորներով կամ ասացվածքներով.

1. Bodas en Mayo, males las llamo. – Հայաստանում ևս ընդունված է, որ մայիս ամսին ամուսնանալը լավ չէ:
2. Casa donde la mujer manda, mal anda. – Այն տունը, որտեղ կինն է իշխում և որոշումներ կայացնում, կործանված է:
3. Casa sin madre, río sin cauce. – Տունն առանց կնոջ տան նման չէ:
4. Casa no tiene, quien hijos no ha. – Եթե ընտանիքում երեխա չկա, այդ ընտանիքը լիարժեք լինել չի կարող:
5. Cabra por viña, cual la madre tan hija. – Like mother, like daughter – Ինչպիսին մայրն է, այնպիսին էլ աղջիկն է:
6. Cuando fui nuera, nunca tuve buena suegra, y cuando fui suegra nunca tuve nuera. – Չկան լավ սկեսուրներ և լավ հարսներ:

բ. Իսպաներենում, ի տարբերություն հայերենի և անգլերենի, սկեսուրների վերաբերյալ ասացվածքների թիվը 35-ն է, մինչդեռ հայերենում և անգլերենում ընդհանրապես չկան: Սակայն գրեթե բոլոր ասացվածքները հունորային երանգ ունեն, որը վկայում է այն մասին, որ իսպանական լեզվամշակույթում սկեսուր-հարս հարաբերությունները «պայթյունավտանգ չեն»: Հայերենում սկեսուրների մասին ասացվածքների բացակայությունը և զոքանչների մասին ասացվածքների

⁵Եզրույթն առաջադրել է պրոֆ. Ֆ. Խլղաթյանը:

գոյությունը նախ վկայում է հայ հասարակության տղամարդակենտրոն լինելու, ապա՝ ռուսական լեզվամշակույթի ազդեցության մասին:

1. Acuérdate, nuera, de que también serás suegra. (Acuérdate, nuera, que serás suegra.)
2. A las suegras, oírles la misa y sacarles el cuerpo.
3. A la suegra hay que sufrirla, como a la muela picada.
4. Allá vayas, casada, donde no halles suegra ni cuñada.
5. Aquella es bien casada, que no tiene suegra ni cuñada.
6. Barre la nuera, lo que ve la suegra.
7. Bien me quiere mi suegra, si de mi mal no se alegra.

գ. Ասացվածքների հոմանիշային շարքեր ավելի շատ հանդիպում են իսպաներենում: Հոմանիշների առկայությունը վկայում է տվյալ հասկացությունների և դրանց արտահայտած իմաստների կարևորության մասին:

1. 1. A casa de tu hermana, una vez a la semana.
2. A casa de tu hermano no irás cada verano.
3. A casa de tu hermano no vayas de ordinario, y menos si es casado.
4. 2. Al niño besa quien besar a la madre quisiera.
5. Besando al niño, a su madre le hace un cariño.
6. Conquistada la madre, segura está la hija.

դ. Համադրվող երեք լեզուներում էլ հանդիպում են կենդանիների անվանումներ պարունակող ասացվածքներ, որոնք հատկապես մեծ թիվ են կազմում իսպաներենում: Իսպաներենում և հայերենում դրանք գործածվում են՝ ցույց տալու երեխաների նմանությունը ծնողներին, իսկ անգլերենում՝ նաև կնոջ մասին խոսելու համար, որը երբեմն հասնում է գռեհկության (Ադյուսակի ասացվածքները ներկայացված չեն որպես համարժեքներ հակադրվող երեք լեզուներում):

Իսպաներեն	Անգլերեն	Հայերեն
Hijo de tigre sale pintado.	The black crow thinks her own birdie white.	Ագռավը կարծում է, թե իր ծագը բոլորից սիրուն է:
Hijo de tigre nace pintado, y el de la chucha rabipelado.	The owl thinks her won young the fairest.	-

ե. Անգլերենում գտել և ուսումնասիրել ենք 14 մշակութային, որոնց իմաստները հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել անգլիական մշակույթին, վարքուբարքին, առասպելներին և բանահյուսությանը, իսկ իսպաներենում՝ ընդամենը երեքը.

Օր.՝

From clogs to clogs in only three generation. – “clog”-ը փայտյա հաստ ներբան ունեցող կոշիկի տեսակ էր, որը հազում էին գործարանների աշխատակիցները Անգլիայի հյուսիսում: Ասացվածքն ակնարկում է, որ ինչքան էլ հարուստ դառնա աղքատ մարդը, միևնույնն է նրա ծոռները վերադառնալու են աղքատությանը՝ կրկին կրելով փայտե ներբաններով կոշիկներ:

«Ընտանիք» գերհասկացության արտահայտող դարձվածային միավորները (ԴՄ) զուգադրվող երեք լեզուներում մեծ չափով արտահայտված

են«ամուսնական հարաբերություններ» իմաստային դաշտում. անգլերենում՝ 160 դարձվածային միավոր, հայերենում՝ 29 և իսպաներենում՝ 251:

Անգլերենում նշված իմաստային դաշտը ներկայացված է յոթ, հայերենում՝ չորս, իսկ իսպաներենում՝ ինը շրջագծերով:

Անգլերենում և հայերենում գերհասկացույթի միջուկը *կնոջը*, իսկ իսպաներենում՝ *ամուսնանալ* հասկացությանը վերաբերող դարձվածային միավորներն են: Երեք լեզուներում էլ *ամուսին* հասկացույթը արտահայտող ՂՄ-ները բավականին մոտ են կանգնած շրջագծին: Ընդհանրացնելով նշենք, որ զուգադրվող երեք լեզուներում էլ խիստ կարևորվում են *կին*, *ամուսին*, *ամուսնանալ* հասկացություններն արտահայտող ՂՄ-ները:

Թե անգլերենում, թե՛ հայերենում կան *օժիտ* հասկացությունն արտահայտող ՂՄ-ներ, ընդ որում, դրանք անգլերենում ավելի շատ են, քան հայերենում՝ չորսը երկուսի հարաբերությամբ.

1. A poor beauty find more lovers than husbands.
2. A tocherless dame sits long at home.
3. A great dowry is a bed full of brambles. Հարուստ օժիտը երեսօժանք է:
4. Better a portion in a wife than with a wife. Նորահարսի առաջին օժիտը քնավորությունն է:

Մշակութակներից հայերենում կան *տնփեսա*, իսկ իսպաներենում *բույժ* հասկացությունը պարունակող մեկական ՂՄ-ներ (Cuando no hay calor en el nido, lo busca afuera el marido. Աղվեսին մաշկեցին, հետո հարցրին. «Ո՞նց ես», ասաց. «Տնփեսայից լավ»):

«Ճնող-երեխա հարաբերություններն» արտահայտող իմաստային դաշտն անգլերենում ներկայացված է 64, հայերենում՝ 79, իսկ իսպաներենում 250 ՂՄ-ներով:

Անգլերենում նշված իմաստային դաշտը ներկայացված է ութ, հայերենում՝ երեք, իսկ իսպաներենում՝ կրկին ինը շրջագծերով:

Անգլերենում գերհասկացույթի միջուկը *հայր-տղա*, հայերենում՝ *զավակներ*, իսկ իսպաներենում՝ *տղա երեխա* հասկացություններին վերաբերող դարձվածային միավորներն են: Չնայած այն հանգամանքին, որ մեզ՝ հայերիս է բնորոշ արու զավակների՝ որպես տոհմ շարունակողների նկատմամբ «պաշտամունքը», սա իր արտահայտումը չի գտել ՂՄ-ներում:

Զուգադրվող երեք լեզուներում էլ *հայր*, *մայր* հասկացությունները պարունակող ՂՄ-ները կենտրոնին մոտ են: Հայերենում դրանք գտնվում են միևնույն շրջագծի մեջ, մինչդեռ թե՛ անգլերենում, թե՛ իսպաներենում կենտրոնին ավելի մոտ են *մայր* հասկացությունը պարունակող ՂՄ-ները:

Հայ լեզվամշակույթին այդքան բնորոշ *ամուսնացնել* հասկացությունն արտահայտված չէ ՂՄ-ներում, մինչդեռ թե՛ անգլերենում, թե՛ իսպաներենում կան նշված հասկացությունն արտահայտող ՂՄ-ներ, ինչպես՝ Marry your daughter and eat fresh fish betimes. Marry your daughter betimes, lest they marry themselves. A la hija mala, dineros y casarla. En martes, y tu hijo cases, y tu cerdo mates. En viernes ni en martes, ni tu casa mudes, ni tu hija cases, ni tu viña podes, ni tu ropa tajes. Casa chica infierno grande.

«Բարեկամական հարաբերություններ» արտահայտող իմաստային դաշտն անգլերենում ներկայացված է 8, հայերենում՝ 44, իսկ իսպաներենում 113 ՂՄ-ներով:

Անգլերենում և հայերենում նշված իմաստային դաշտը ներկայացված է երկու, իսկ իսպաներենում՝ կրկին ութ շրջագծերով:

Անգլերենում գերհասկացույթի միջուկը *սկեսուր*, իսկ հայերենում և իսպաներենում՝ *բարեկամ* հասկացություններին վերաբերող դարձվածային միավորներն են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բառերի լոկ բառարանային գոյությունն արձանագրելը չի կարող ամբողջական պատկերացում տալ առ այն, թե «ընտանիք» գերհասկացույթի բաղկացուցիչ մաս կազմող հասկացություններն ինչպիսի դիրք և կարևորություն ունեն նշյալ լեզուներում, անդրադարձ ենք կատարել նաև գեղարվեստական ստեղծագործությունների մեջ նշյալ բաղադրիչների օգտագործմանը՝ իրականացնելով ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություն:

«Հարազատական հարաբերություններ» իմաստային դաշտի վերլուծությունն ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ

- անգլերենը և հայերենն այստեղ առավել մանուկություններ են հանդես բերում առ այն, որ երկու լեզվում էլ առավել կարևորվում են հայրական կողմի հարազատները՝ ի տարբերություն իսպաներենի, որտեղ այդ մասին ոչ մի մատնանշում չկա,

• նշված երեք լեզուներում առավել մեծ թիվ է կազմում «քույր» հասկացույթի կիրառությունը՝ ի համեմատություն «եղբայր» հասկացույթի, որն, ըստ մեզ, բացատրվում է «քույր» բառային միավորի առավել զգացմունքային բնույթով, քանզի այլապես սխալ կլիներ կարծել, որ այնպիսի հասարակություններում, որտեղ կարևորվում են հատկապես հայրական կողմի բարեկամները, կարող է հատկապես կարևորվել «քույր» բառային միավորը,

«Անուսնական հարաբերություններ» իմաստային դաշտի վերլուծությունն ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ

- նշված երեք լեզուներում կենտրոնական հասկացություններ են «ամուսին», «կին» բառային միավորները, որոնք ամենաշատն են օգտագործվում քննվող գեղարվեստական երկերում,
- հայկական լեզվամշակույթին այդքան բնորոշ «նշանադրություն» հասկացույթը հանդիպում են միայն անգլերենում,
- հայերենը, ի տարբերություն անգլերենի և իսպաներենի բնորոշվում է ամուսնությանն առավել ավանդական մոտեցմամբ, քանզի միայն հայերենում են դուրս բերվել «ամուսնացնել», «նշանել», «մարդի տալ», «տնավորել» բառային միավորները, որոնք մատնանշում են ծնողների կարևորությունը անգամ ամուսնության հարցում,
- ի տարբերություն դարձվածային մակարդակի, տեքստային մակարդակում անգլերենում դուրս չեն բերվել նշակութակներ (ի տարբերություն հայերենի):

«Ծնող-երեխա հարաբերություններ» իմաստային դաշտի վերլուծությունն ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ

- անգլերենում նշված իմաստային դաշտը հիմնականում արտահայտված է «հայր, մայր, դուստր, որդի» բառային միավորներով, ինչը հատկանշական է նաև հայերենի և իսպաներենի համար,

- անգլերենում, ի տարբերություն հայերենի և իսպաներենի, «դուստր» բառային միավորի կիրառությունը կրկնակի անգամ գերազանցում է «որդի» բառային միավորի կիրառությանը, ինչը հատկանշական չէ հայերենի և իսպաներենի համար, որոնց առավել բնորոշ է արու գավակների հանդեպ պաշտամունքը:

Ատենախոսության **եզրակացության** բաժնում ներկայացվում են հետազոտության արդյունքները, որոնց ամփոփումից բխում են հետևյալ եզրահանգումները.

1. «Ընտանիք» հասկացույթի մեջ առկա տարաբնույթ իմաստային դաշտերի (բարեկամական, ամուսնական, ծնող-երեխա) առկայությունը, որոնց ամբողջությունը ապահովում է այդ հասկացույթի ընդգրկում կառուցվածքը, թույլ է տալիս «ընտանիքը» համարել գերհասկացույթ:

2. Անգլերենում, հայերենում և իսպաներենում «ընտանիք» գերհասկացույթի բառայնացման կանոնակարգված ուսումնասիրությամբ հաստատվում է, որ ի տարբերություն հայերենի, անգլերենում քննվող հասկացույթի ծագումնաբանական ծառի բներում ներկայացված չեն «ամուսին, կին» հասկացույթները, քանի որ վիճակագրական տվյալների համաձայն ներկայումս Եվրոպայում այլևս չի կարևորվում ծնողների պաշտոնապես ամուսնացած լինելու հանգամանքը, որն էլ արտացոլվել է համապատասխան բառի բառահոլովածում: Ինչ վերաբերում է «բարեկամական, ամուսնական և ծնող-երեխա հարաբերություններ» իմաստային դաշտերի բառային արտահայտությանը, ապա, ի տարբերություն հայերենի, անգլերենում դրանց շարքում բացակայում են ազգամշակութակ-միավորները:

«Ընտանիք» գերհասկացույթի երեք իմաստային դաշտերը ներկայացնող բառային միավորների քանակական հավասարակշռությունը վկայում է անգլերենում դրանց զբաղեցրած կարևոր դիրքի մասին:

3. «Ընտանիք» գերհասկացույթի միջուկային և շրջագծային նշանակությունների առունով անգլերենն առավելապես նմանություններ է հանդես բերում իսպաներենի հետ, իսկ ի տարբերություն հայերենի, այդ գերհասկացույթի միջուկային նշանակությունը հանդես է գալիս «child» հասկացույթի հետ սերտ, չմիջնորդավորված հարաբերակցության մեջ:

4. Անգլերենում «ընտանիք» գերհասկացույթն արտահայտող բառերի սեռային տարբերություններն արտահայտվում են տարբեր միավորներով, որով և նա նմանվում է հայերենին՝ ի տարբերություն իսպաներենի, որտեղ դրանք արտահայտվում են բառակազմական միջոցներով, մասնավորապես՝ վերջավորության փոփոխությամբ:

5. Անգլերենի դարձվածաբանության ոլորտում գերակայում են «ամուսնական հարաբերություններ», ապա նաև «ծնող-երեխա» հարաբերություններ արտահայտող ԴՄ-ներ, որն էլ հիմնավորվում է անգլիական ընտանիքի միջուկային բնույթով: Ի տարբերություն հայերենի և իսպաներենի՝ անգլերենի ԴՄ-ներում (մասնավորապես՝ ասացվածքներում) ի հայտ են գալիս ազգամշակութակ-միավորներ, որոնք հիմնականում վերաբերում են «ամուսնական հարաբերություններ» իմաստային դաշտին և արտահայտում են անգլիացիների նախապաշարմունքները:

6. «Բարեկամական հարաբերություններ» իմաստային դաշտն արտահայտող ԴՄ-ների գծագրային պատկերն անգլերենում արտահայտված է միջուկով և մեկ շրջագծով: Միջուկում ներառված են «հարս-սկեսուր»

հարաբերություններն արտահայտող ԴՄ-ները, որոնք, ինչպես և իսպաներենում, հունորային երանգ ունեն:

«Ամուսնական հարաբերություններ» իմաստային դաշտն արտահայտող ԴՄ-ների գծագրային պատկերն անգլերենում առավել նմանություններ ունի հայերենի հետ, քանզի երկու դեպքում էլ հասկացույթի միջուկը «կին» հասկացույթն արտահատող ԴՄ-ներն են:

«Ծնող-երեխա հարաբերություններ» իմաստային դաշտն արտահայտող ԴՄ-ների գծագրային պատկերն անգլերենում ներկայացվում է «երեխաներ, հայր-տղա» հասկացույթներն արտահատող ԴՄ-ներով՝ ի հայտ բերելով արու գավակների նկատմամբ որոշակի պաշտամունք:

7. Տեքստային մակարդակում իրականացված մեր ուսումնասիրությունները և դրանց արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ խոսքից կրտված լոկ բառային մակարդակի ուսումնասիրությունը չի կարող որևէ գերհասկացույթի վերաբերյալ ամբողջական արդյունք ապահովել: Մեր կողմից իրականացված քանակական ուսումնասիրությունները ևս փաստում են, որ շատ բառային միավորներ, գոյություն ունենալով լեզվում, այնուամենայնիվ, գրեթե չեն կիրառվում խոսքում:

8. Տեքստային վերլուծությանը «բարեկամական հարաբերություններ» իմաստային դաշտում բացահայտվում են անգլերենի և հայերենի ընդհանրությունները: Գրեթե բոլոր ստեղծագործություններում երկու լեզուներում էլ առկա են «հայրիշխանության» դրսևորումները ներկայացվող բառային միավորներ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Լեզվաբանության մեջ կոնցեպտի դասակարգման որոշ խնդիրների շուրջ» // Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ, Պրակ 7, «Լինգվա» հրատ, 2006, Երևան, էջ. 186-195:
2. «Կոնցեպտ, նշանակություն, հասկացություն եզրերի տարանջատման խնդիրների վերաբերյալ» // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում /N 10/: Գիտական աշխատությունների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ. 160-168:
3. «Ընտանիք գերհասկացության դաշտի համեմատական վերլուծության խնդիրների վերաբերյալ անգլերենում, հայերենում և իսպաներենում» // Բանբեր, Ռոմանագերմանական բանասիրություն 1 (N 21): Երևան, ԵՊԼՀ, 2012, էջ 266-282
4. ««Ընտանիք» գերհասկացույթի ծագումնաբանական ծառի զուգահրակական ուսումնասիրությունը անգլերենում, հայերենում և իսպաներենում» // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում /N 15/: Գիտական աշխատությունների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ. 123-136:

СОГОМОНЯН ЗАРУИ РАФИКОВНА

Гиперконцепт “семья” в английской, армянской и испанской лингвокультурах

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07. - «Германские языки».

Защита состоится 27 мая, 2015г. в 11:00 на заседании специализированного совета 009 «Иностранные языки» при Ереванском государственном университете по адресу: Ереван, ул. Ал. Манукяна 1.

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена лингвокультурному исследованию гиперконцепта «семья» (на материале английского, испанского и армянского языков). Менталитет любого народа включает целый ряд культурных, привычных ему «врожденных» образований – концептов, которые развиваются независимо от языка.

В данной работе «семья» рассматривается как гиперконцепт. В этом отношении мы полностью разделяем мнение исследователей о том, что лингвокультурология столкнулась с необходимостью разработки единицы более масштабной, нежели концепт, которая предоставит возможность ввести в сферу исследования целостные семантические группы, состоящие, в свою очередь, из концептов «суперконцепты», «гиперконцепты». Считаем необходимым отметить, что термин «գերհիշվածք» используется в качестве эквивалента русского термина «гиперконцепт» с учетом того, что приставка «гипер» переводится на армянский язык как «գեր».

Объектом исследования в работе является изучение гиперконцепта «семья» в английской лингвокультуре в сравнении с формами его проявления в испанской и армянской лингвокультурах.

Предметом исследования в работе являются:

1. словарные единицы в английском и сопоставляемых языках в следующих семантических полях:

- «родственные отношения»,
- «супружеские отношения»,
- «отношения родители-дети».

2. Пословицы, которые классифицируются в соответствии с вышеуказанными семантическими полями гиперконцепта «семья».

3. Частота использования лексических единиц и пословиц на текстуальном уровне.

Актуальность исследования определяется тем, что общение представителей различных наций в современном мире не ограничивается только знанием языков, необходимо также изучение и знание национального характера, мировосприятия и мировоззрения, что и обеспечит эффективную межкультурную коммуникацию.

Цель работы – систематизированное обращение к семантическим особенностям гиперконцепта «семья» на лексическом уровне, а также объяснение лингвостилистических особенностей данного языкового явления в английской лингвокультуре в их сопоставлении с испанскими и армянскими эквивалентами.

В соответствии с поставленными целями в работе решаются следующие задачи:

1. С помощью этимологического древа уточнить местоположение словарных единиц, представляющих гиперконцепт «семья» по отношению к центральной единице – концепту «ребенок».

2. Уточнить границы ядра и периферий фразеологических единиц, отражающих три семантических поля гиперконцепта «семья».

3. Исследовать смысловые градации гиперконцепта «семья» на словарном и паремиологическом уровне (слова и пословицы) в английском и сопоставляемых языках.

4. Осуществить анализ понятия «семья» на уровне текстов в английском и сопоставляемых языках.

На основе анализа гиперконцепта «семья», проделанного нами на разных языковых уровнях (словарном, фразеологическом, текстовом) в английском языке в сопоставлении с армянским и испанским языками, мы приходим к выводу о том что:

1. На словарном уровне английский язык по количеству словарных единиц, выражающих вышеуказанные отношения, уступает армянскому языку, поскольку армянский, будучи агглютинативным языком, имеет больше возможностей для создания новых слов посредством изменения грамматических форм. Количество словарных единиц в испанском и английском языках не очень отличается, поскольку оба языка являются аналитическими.

2. На фразеологическом уровне английский язык занимает промежуточное положение по сравнению с армянским и испанским языками по количеству пословиц. В испанском нами выделены и исследованы 613, в английском – 213, в армянском – 165 пословиц. Большое количество пословиц в испанском языке объясняется тем, что одна и та же пословица со словарными единицами, отражающими гиперконцепт «семья», имеет несколько синонимических вариантов. Следует отметить, что только в английском языке имеются национально-специфические культуремы, которых нет в других языках. Большая часть испанских пословиц в армянском языке понимается, но не имеет идентичного оформления.

3. В результате текстового анализа стало очевидно, что семантическое поле «родственные отношения» в трех сопоставляемых языках распределяется практически одинаково. Тем не менее, наибольшее сходство выявляется в английском и армянском языках, поскольку проявление «патриархата» в обоих языках находит свое отражение и в речи, о чем свидетельствуют труды, в большинстве из которых повествуется о родственниках по отцовской линии. Во всех трех языках широко используется лексическая единица «сестра», в отличие от лексической единицы «брат», которая встречается реже.

ZARUHI SOGHOMONYAN

Hyperconcept “Family” in English, Armenian and Spanish Lingvocultures

SUMMARY

ZARUHI SOGHOMONYAN

Hyperconcept “Family” in English, Armenian and Spanish Lingvocultures

SUMMARY

The research is aimed at analyzing the hyperconcept “family” from the linguocultural perspective (on the material of English, Armenian and Spanish Languages). The mentality of each nation possesses a series of cultural, “inborn” concepts, which develop irrespective of the language.

In the current work the “family” is viewed as a hyperconcept and in this respect we share the opinion of various researchers who claim that there is a necessity to elaborate a new entity in linguo-culturology which will be more substantial than *concept*. This will endow with the opportunity to include into the research thorough semantic groups which will in their turn be comprised of concepts; so-called “hyper-concepts”, “super-concepts”. We find it necessary to state that the term «գերհասկացույթ» is used as an equivalent of the Russian term «гиперконцепт» taking into account the fact that the prefix «гипер» is translated into Armenian as «գեր».

The **object** of our research is the study of the hyperconcept “family” in the English linguo-culture in comparison with its representations in Armenian and Spanish. The aforesaid is realized through:

1. the study of the below-given semantic fields of lexical units in English and in comparative languages:

- “relations between relatives”,
- “relations between spouses”,
- “relations between parents and children”.

2. The study of proverbs which are classified in accordance with the aforementioned semantic fields of the hyperconcept “family”.

3. The study of the frequency of usage of lexical units and proverbs on textual level.

The **novelty** of the research is determined by the fact that in modern, globalized world the communication between the representatives of different nations is not limited solely by the knowledge of languages: for effective intercultural communication the study and recognition of national character, perception of the world and ideology is required.

The **aim** of the research is a more precise and systematic reference to the semantic peculiarities of the hyperconcept “family” on the lexical level, as well as the explanation of

linguo-stylistic peculiarities of the following linguistic phenomenon in the English linguo-culturology in comparison with its equivalents in Armenian and Spanish linguo-cultures.

In accordance with the determined aims the following tasks are being resolved:

1. to define the location of the lexical units of the hyperconcept “family” into the central unit “child” in the etymological tree,
2. to delineate the borders of the core and the periphery of phraseological units, reflected in three semantic fields of the hyperconcept “family”;
3. to study the semantic gradations of the hyperconcept “family” in English and comparative languages on lexical level (words and proverbs);
4. to analyze the hyperconcept “family” on textual level in English and comparative languages.

Based on the analysis of the hyperconcept “family”, which was carried out on lexical, phraseological and textual levels in English as compared to Armenian and Spanish, the below-mentioned conclusions were drawn:

1. on lexical level, when the aforesaid semantic relations are concerned, English has fewer lexical elements as compared with Armenian, since the latter, being a synthetic language, possesses wider opportunities for the formulation of new lexical units by means of different grammatical forms. The number of lexical units in English and Spanish is almost identical, since they are both analytical languages.

2. As far as phraseological units are concerned, English is represented by 213, Armenian 165 and Spanish 613 proverbs. The abundance of proverbs in Spanish can be accounted for by the fact that one and the same proverb expressing the aforesaid semantic relations is represented by series of synonymous proverbs. National specific proverbs were revealed only in English.

3. From the analyses of textual level it became apparent that the semantic field “relations between relatives” is represented more or less evenly in English and compared languages. Nevertheless, English has more similarities with Armenian, namely, the phenomenon of patriarchy in the aforesaid two languages, has found its reflection in speech as well. In all texts under study mostly paternal relatives were talked about. In all three languages the lexical unit “sister” is used far more frequently than the one “brother”.

